



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՍԵՄՏԵՄԲԵՐ, 2021

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆՇԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոնների պահելու կերպը,
եւ մշտապէս պիտի կատարեմ վանոնք:
Տուր որ հասկնամ Օրէնքդ,
որպէսպի կատարեմ եւ ամբողջ սրտով հնազանդիմ անոր:
Պատուէրներուդ շաւիղին մէջ առաջնորդէ վիս,
որովհետեւ անոնցմէ՝ հաճոյք կ'առնեմ:
Ըրէ այնպէս՝ որ սիրտս պատուիրաններուդ փափաքի,
Քան անձնական հարստութիւն դիպելու:
Հայեացքս հեռացուր դատարկ բաներէն,
եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի:
Ես քու ծառայ եմ, կատարէ ինձի Կուլաձ խոստումդ,
այն խոստումը՝ որ կու փաս քեզմէ ակնածողներուն:
Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ,
որովհետեւ վճիռների արդար են:
Միակ փափաքս է՝ հրահանգների կատարել.
Կեանք Կուր ինձի, դուն՝ որ արդար ես:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ



ԱՌԱԿԱՑ 16 ԳԼՈՒԽ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՍՏՈՒԹԻՒՆ 16:5-15

Որքան անհրաժեշտ ու կարեւոր է մանաւանդ այս դժուարին օրերուն իմաստութիւն ունենալը, այս պարագային իմանալու, գիտնալու ու մանաւանդ համբերութեամբ սպասելու Տիրոջ գալուստին: Իմաստութիւնը ունենալու որպէսզի Աստուծոյ կամքը հասկնալու այս բոլորին մէջ թէ ինչու կը պարտահին այս բոլորը: Իմաստութիւն է պէտք, որպէսզի յանկարծ այս դժուարին պայմաններուն մէջ չխոստորելու:

Շարունակելով Առակաց 16րդ գլուխ 5 համարը, ու դարձեալ կը յիշեցնէ, թէ Աստուած չի սիրեր հպարտ սիրտը, մանաւանդ Աստուծոյ աչքին պիղծ է: Իսկ նախադասութեան շարունակութիւնը կու գայ ցոյց փայլու, թէ որքան ալ յաջողին իրենց ծրագիրներուն մէջ, աւարտին սակայն անպարտիժ պիտի չմնան: Ահա երեւոյթ մը որուն մասին յաճախ կը մտածենք, երբ մանաւանդ կը փեսնենք թէ ինչպիսի յաջողութիւններու կրնան հասնիլ ու կը հասնին, չտռնանք սակայն Աստուծոյ արդար դատաստանը:

Գեղեցիկ է արքայապարտութիւնը հետեւեալ 6 համարին, «Ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ կը քաւուի անօրէնութիւնը»: Այս միայն Աստուծոյ ողորմութեամբ է որ մենք կրնանք ձեռք ձգել մեղքերու քաւութիւն եւ թողութիւն: Ողորմութիւն որ ինքնին խոստումն է Աստուծոյ կողմէ փրկում, իսկ ճշմարտութիւնը այդ խոստումին կարարումն է: Երբ կը ըսենք Աստուած ճշմարիտ է, կը նշանակէ ոչ միայն հաւատարիմ է Իր փրկում խոստումին, այլ նաեւ այդ խոստումը կարարողը: Ահա այս իսկ իմաստով անօրէնութիւն կը քաւուի Իր ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ: Իսկ Տիրոջ վախովն ալ մարդը կը հեռանայ չարութենէն, ինչպէս պիտի ըսէ Սաղմոսերգուն երբ կը բացատրէ թէ ինչ է Տիրոջ վախ հասկացողութիւնը եթէ ոչ չարէն հեռու մնալը:

7րդ համարը կու գայ ըսելու թէ ինչպէս Տէրը կը գործէ մարդու կեանքին մէջ երբ մանաւանդ փեսնէ այդ մարդուն կեանքին ընթացքը, հետեւանքը կը լլայ, որ նոյնիսկ անոր թշնամիները կը հաշտեցնէ անոր հետ: Այս խօսքն օրինակը մենք կը փեսնենք նոյնինքն Աստուածաշունչին մէջ Ծննդոց գիրք, Յակոբի եւ Եսայի պարամութեան մէջ:

8րդ համարը դարձաւ քիչով բարարուելու մասին է, բայց այդ քիչին մէջ արդարութեամբ ձեռք բերուած: Հարցը պարզապէս քիչին մէջը չէ, այլ որքան արդարութեամբ ձեռք բերուածին:

9րդ համարը կու գայ մեզի ցոյց փայլու, յիշեցնելու եւ սորվեցնելու, թէ ով է մարդու ճամբան հնարողը, այս պարագային ճամբայ ըսելով կը հասկնանք ապրելակերպ, մտածելակերպ, եթէ ոչ մարդու սիրտը, այսինքն՝ անոր մտածումները, խորհուրդները: Մենք մեր մտածումներով, ծրագիրներով, հաշիւներով կու գէ մեր կեանքի ընթացքը ճշդել, բայց յանկարծ այդ ճամբան կրնայ ծուռ ըլլալ, ահա Տէրը Ինք կու ողորդէ մեր քայլերը ըստ այնմ, մանաւանդ երբ ամբողջութեամբ Իրեն կը վստահինք, կ'ապահինք ու Իրեն կը դիմենք:

10րդ համարը յիշեցում է որ թագաւոր կոչուած անձը խորքին մէջ ուրիշ մէկը չէ եթէ ոչ Աստուծոյ ներկայացուցիչը: Առիթով մը երբ Քրիստոս ներկայացաւ Պիղատոսին դիմաց, նախքան խաչելութիւնը, Պիղատոս ըսաւ Յիսուսին. «Դուն գիտես, որ ես իշխանութիւն ունին Քեզ խաչէն վար իջեցնելու», Քրիստոս պարասխանեց ըսելով. «Դուն չունիս այդ իշխանութիւնը, Հայրս Ինք քեզի փրկում է»: Ուրեմն ամէն իշխանութիւն փրկում է Հօր Աստուծոյ կողմէ: Ահա թէ ինչպիսի դերակարարութիւն ունի թագաւորը որ եթէ երբեք Աստուծոյ կամքին համաձայն թագաւորէ, ապա այդ թագաւորը աստուածային ներշնչումով ու առաջնորդութեամբ կը ղեկավարէ նաեւ երկիրը: Ահա թէ ինչու յարուկ աղօթք կը բարձրացուի առ Աստուած ղեկավարներու եւ թագաւորներու համար, որպէսզի ըստ այնմ ղեկավարեն ժողովուրդը: Ահա այն արեւն անոնց բերանը ու բերնին արդիւնքը, բերնէն ելած վճիռը երբեք չի սխալիր, որովհետեւ այդ վճիռը աստուածային վճիռն է: Շարունակութիւնը 11րդ համարն է, որովհետեւ ամէն կշիռք Տիրոջն են:

12-13 համարները կը ներկայացնեն այս անգամ հպարակները այդ թագաւորութեան: Եթէ երբեք թագաւորը Աստուծոյ կամքին համաձայն թագաւոր է, ապա Աստուծոյ նման բժախնդիի է, առաւել եւս չարագործութիւնն ալ թագաւորին զգուելի է, այնպէս ինչպէս Աստուծոյ համար չարագործութիւնը զգուելի է: Ինչո՞ւ, որովհետեւ այդ պէտքը արդարութեամբ հաստատուած է: Ինչպէս նաեւ արդար շրթունքները թագաւորին համար հաճելի են, ու մանաւանդ կը սիրեն շիփակ խօսողը: Խորքին մէջ այդ բացապրութիւնն ու արքայապարտութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ ցոյց փայլու թէ ինչպէս երկրաւոր թագաւորները մանրակերպը ըլլալու են ճշմարիտ Թագաւորին՝ Աստուծոյ: Այնպէս ինչպէս Իրեն համար հաճելի, նոյնպէս ալ Աստուծոյ համար: 14-15 համարները կը յիշեցնեն թէ ինչպիսի իշխանութիւն ունի թագաւորը, որուն բարկութիւնը մահուան դատարան է, բայց իմաստուն մարդը այդ բարկութիւնը կ'իջեցնէ: Միեւնոյն ժամանակ անոր երեսին լոյսը կեանք է: Եթէ այսքան ըսուած երկրաւոր թագաւորի մասին, որքան առաւել եւս Երկնաւոր Թագաւորին պարագան: